ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ք.Վարդենիս «22» դեկտեմբերի 2025թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի 2025թ. կարիքների համար Գնումների հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված « ՀՀԳՄՎՀ-ԲՄԽԾՁԲ-24/67» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025թ. Փետրվարի 10-ին Վարդենիսի համայնքապետարանի և «ԱՐՄՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ի միջև կնքվել է « ՀՀԳՄՎՀ-ԲՄԽԾՁԲ-24/67-1» ծածկագրով պայմանագիր:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 50.1 կետի պահանջներով՝ բավարարվել է «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձի մասնակցության իրավունքը « ՀՀԳՄՎՀ-ԲՄԽԾՁԲ-24/67» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ իրականացնելու «ԱՐՄՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընդունման գործընթացի հանրային հսկողությունը:

«ԱՐՄՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ի կողմից նոյեմբեր ամսում մատուցված ծառայությունների վերաբերյալ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ն տվել է իր դիրքորոշումը:

Համատեղ քննարկումների արդյունքում Պատասխանատու ստորաբաժանումը գտնում է, որ «ԱՐՄՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀԳՄՎՀ-ԲՄԽԾՁԲ-24/67-1 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն նոյեմբեր ամսին չի մատուցվել: Պայմանագրով պատվիրատուի սահմանած պահանջները և ծառայությունները մատուցողի կողմից պայմանագրի տեխնիկական բնութագրով ստանձնած պարտավորությունները համապատասխանում են միմյանց:

Ուստի, Պայմանագրի շրջանակներում նոյեմբեր ամսին մատուցված ծառայություններն ենթակա են ընդունման:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Գրիգորյան

Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ Պ.Պողոսյան